ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XIII, № 1, 1960 Биологические науки

Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՌԵԶԵՐՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Սովետական ժողովրդի առջև յոթնամյակում կանգնած ամենակենսական խնդիրներից մեկը անասնաբուծության մթերքների լիառատության ստեղծումն է։*

*Ինչպես ցույց տվեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման երկարամյա փորձը, անասնաբուծության շեշտակի վերելքը պահանջում է ավելի մեծ ջանքեր. տնտեսությունը վարելու գիտականորեն հիմնավորված սիստեմ և զոոտեխնիկական ու ագրոնոմիական միջոցառումների փոխադարձաբար համաձայնեցված ամբողջական կոմպլեքսի կիրառում։ Այդպիսի միջոցառումների հետևողական կիրառման շնորհիվ էր, որ հնարավոր դարձավ կարճ ժամանակամիջոցում՝ վերջին 4—5 տարում լուրջ նվաճումների հասնել անասնապահության զարգացման և անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման բնագավառում։*

*Անասնապահության զարգացման և անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման բնագավառում մեր երկրում նոր խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին անցած տնտեսական տարում։ 1958 թվականի համեմատությամբ, 1959 թվականին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կոլտնտեսություններում ու սովխոզներում ավելացավ 18%-ով, այդ թվում կովերինը՝ 14%-ով, խոզերի գլխաքանակն ավելացավ 17%-ով, ոչխարներինը՝ 6%-ով, գյուղատնտեսական թռչուններինը՝ 26%-ով։ Դեռ 1957 թվականին մենք գերազանցեցինք ԱՄՆ-ին յուղի համախառն արտադրությամբ, իսկ 1958 թվականին՝ նաև կաթի արտադրությամբ։*

*1959 թվականին Սովետական Միությունը գերազանցեց ԱՄՆ-ին նաև մեկ շնչին արտադրվող յուղի քանակով. բնակչության յուրաքանչյուր շնչին արտադրվեց միջինը 4 կգ յուղ, իսկ ԱՄՆ-ում՝ 3.7 կգ (0,2 կգ պակաս, քան արտադրվել էր 1958 թվականին)։ Չնայած վերջին տարիներին զգալիորեն ավելացել է նաև մսի արտադրությունը, բայց այդ բնագավառում մենք դեռ ետ ենք մնում ԱՄՆ-ից։ Ահա թե ինչու մսի պրոբլեմի լուծմանը առանձնապես մեծ ուշադրություն է դարձվում։ ՍՄԿԿ Կենտկոմի 1959 թվականի դեկտեմբերյան պլենումը նշեց, որ առայժմ հնարավորություններ են ստեղծվել մսի արդյունաբերության յոթնամյա պլանը կատարել ժամկետից շուտ՝ 1963 թվականին, և կոչ արեց գյուղատնտեսության բոլոր աշխատողներին պլանից դուրս արտադրել լրացուցիչ 4—5 միլիոն տոննա միս և 1965 թվականին ընդհանուր արտադրանքը հասցնել 20—21 միլիոն տոննայի, որպեսզի յոթնամյակի վերջում մենք հասնենք ԱՄՆ-ին նաև մեկ շնչին արտադրվող մսի քանակով։*

*Անցած տարում, նախորդ տարվա համեմատությամբ, մսի արտադրությունը (սպանդային քաշով) կոլտնտեսություններում ու սովխոզներում ավելացավ 27%-ով, իսկ գնումները՝ 34%-ով (կենդանի քաշով), կաթի արտադրանքը,*

ավելացավ 15%-ով, իսկ գնումներինը՝ 16%-ով, ձվի արտադրությունը ավելացավ 28%-ով, գնումները՝ 32 %-ով։ Կենդանական յուղի արտադրությունը տնտեսության բոլոր կատեգորիաների գծով ավելացավ 8% և կազմեց 845 հազար տոննա։

1959 թվականին, 1958 թվականի համեմատությամբ ավելի է գնվել — տնասուններ և թռչուններ՝ 1.9 միլիոն տոննա, կաթ՝ 2,9 միլիոն տոննա, ձու 1.1 միլիարդ հատ և բուրդ՝ 38 հազար տոննա։ Իսկ 1953 թվականի համեմատությամբ. ավելի է գնվել — միս՝ 2,1 անգամ, կաթ՝ գրեթե 2.4 անգամ, ձու՝ 2,2 անգամ և բուրդ՝ 1,8 անգամ։

Գյուղատնտեսության սոցիալիստական սիստեմի խոշոր հաղթանակի մասին է խոսում նաև այն փաստը, որ մսի պետական գնումների մեջ կոլտնտեսությունների ու սովխոզների բաժինը անցած տարում կազմեց 83%, իսկ կաթի պետական գնումների մեջ՝ 92%-ով։ Դա հիրավի մեծ հաղթանակ է։

1959 թվականին՝ յոթնամյակի առաջին տարում, անասնաբուծության զարգացման բնագավառում զգալի նվաճումներ ձեռք բերին նաև Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները։

1959 թվականին, 1957 թվականի համեմատությամբ, կոլտնտեսություններում ու սովխոզներում կաթի արտադրությունն ավելացավ 17.5 %-ով, մսինը 21%-ով, բրդինը՝ 10,3%-ով իսկ ձվինը՝ 81.4%-ով։

Խոշոր եղջերավոր անասունների քանակը ռեսպուբլիկայում նույն ժամանակամիջոցում ավելացավ 8,3%-ով, այդ թվում կովերինը՝ 18.3%-ով, ոչխարների և այծերի գլխաքանակը՝ 8.4 %-ով, խոզերինը՝ 22,9 %-ով, թռչուններինը՝ 92.1%-ով։ Մսի արտադրության ավելացման տեսակետից առանձնապես աչքի ընկան Ապարանի, Հոկտեմբերյանի, Եղեգնաձորի, Հրազդանի և Կրասնոսելսկի շրջանների կոլտնտեսություններն ու սովխոզները։

Սպիտակի շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները բարձր ցուցանիշների հասան նաև կաթի արտադրության ավելացման բնագավառում։ 1958 թվականի համեմատությամբ, այդ շրջանի կոլտնտեսություններում ու սովխոզներում կաթի արտադրությունն ավելացավ 30%-ով։ Նրանց՝ այդ ցուցանիշի տեսակետից, ապիտակցիներին գրեթե չզիջեցին Կիրովականի շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները, որոնք կաթի արտադրությունն ավելացրին 28%-ով։ Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները կաթի արտադրությունն ավելացրին 21%-ով, իսկ Արթիկի, Եղեգնաձորի և Վեդու շրջանների կոլտնտեսություններն ու սովխոզները՝ 16%-ով։

Հայաստանի Կոմպարտիայի XXI համագումարն բուռ պաշտպանեց գնահատելով ռեսպուբլիկայի գյուղատնտեսության, այդ թվում նաև անասնապահության բնագավառում ձեռք բերված անվիճելի նվաճումները, միաժամանակ նշեց, որ անասնապահության զարգացման և նրա մթերատվության բարձրացման բնագավառում դեռ լուրջ թերություններ գոյություն ունեն, եղած հնարավորությունները լրիվ չեն օգտագործվում, որի հետևանքով չեն կատարվում առանձնված սոցիալիստական պարտավորությունները։

Այդ տեսակետից առանձնապես անբավարար է վիճակը Ազիզի, Նոյեմբերյանի, Ղափանի, Թալինի, Ամասիայի, Կիրովականի, Դորիսի, Արտաշատի և մի քանի այլ շրջաններում, որտեղ մսի արտադրությունը անցյալ տարվա համեմատությամբ ո՛չ միայն չավելացավ, այլև, նույնիսկ, նկատելիորեն պակասեց, որի հետևանքով ռեսպուբլիկայի կոլտնտեսություններն ու սովխոզները մսի ար-

սաղբությունը ավելացնելու համար սահմանված պարտավորությունը 30%-ի փոխարեն կատարեցին միայն 5%-ով։

Նաև արտադրությունն ավելացնելու վերաբերյալ սահմանված սոցիալիստական պարտավորությունները անբավարար կատարեցին Ամասիայի, Ղուկասյանի, Կալինինոյի, Աղինի, Հրազդանի, Թալինի, Կրասնոսելսկի, Սևանի շրջանների կոլտնտեսություններն ու սովխոզները։

Ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում դեռ համարձակորեն չեն լուծում թռչնաբուծական ֆերմաների խոշորացման հարցերը, չնայած որ հենց մեր ռեսպուբլիկայում եղած խոշոր թռչնաբուծական տնտեսությունների աշխատանքի փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս նրանց անվիճելի առավելությունները մանր ֆերմաների համեմատությամբ։

Համագումարն անբավարար համարեց հանրային հոտի, մասնավորապես խոշոր ու մանր եղջերավոր անասունների ներկայումս գոյություն ունեցող աճը, տոհմային գործի դրվածքը։

Հոտի վերարտադրության տեսակետից դեռ հետ են մնում նաև ռեսպուբլիկայի սովխոզները։ 1958 թվականին 100 կովից սովխոզներում ստացել են միայն 77 հորթ, 100 մաքուց՝ 69 գառ։ 1959 թվականին վիճակը մի փոքր բարելավվել է, բայց դեռ հեռու է բավարար լինելուց։ Միաժամանակ անասնապահական սովխոզների տրեստի սիստեմում կան անհամեմատ ավելի բարձր ցուցանիշներ ունեցող տնտեսություններ։ Մրգաշատի սովխոզը (Էջմիածնի շրջան) անցյալ տարի յուրաքանչյուր 100 կովից ստացել է 96 հորթ, Ախուրյանի սովխոզը (Ախուրյանի շրջան)՝ 93 հորթ, Գորիսի շրջանի Վերնաշենի սովխոզը 1959 թվականին 100 մաքուց ստացել 103 գառ։ Այս փաստերը խոսում են այն մասին, որ հանրային հոտի վերարտադրության վիճակը բոլոր սովխոզներում արմատապես բարելավելու համար կան ռեալ հնարավորություններ։

Ակնհայտ է, որ հենց մնացած կոլտնտեսությունների, սովխոզների և առանձին շրջանների կողմից պետական պլանային առաջադրանքներն ու սահմանված սոցիալիստական պարտավորությունները թերակատարելու հետևանքով է, որ իջնում են նաև ռեսպուբլիկայի համապատասխան արտադրական ցուցանիշները։

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ ռեսպուբլիկայի անասնաբուծության զարգացման բնագավառում եղած թերությունները հետևանք են ամենից առաջ այն բանի, որ կոլտնտեսությունների ու սովխոզների մի զգալի մասը հետևողականորեն չի կիրառում գիտականորեն հիմնավորված ագրոզոոտեխնիկական միջոցառումների կոմպլեքսը, վատ է օգտագործվում առաջավորների փորձը, գիտության նվաճումները, եղած ռեզերվները։

Դեռ անցյալ տարի ՀԿՊ Կենտկոմի X պլենումը միանգամայն ճիշտ կերպով նշեց, որ անասնաբուծության զարգացմանը խոչընդոտել է կերի բազայի ընդլայնման ուղղությամբ տարվող խիստ անբավարար աշխատանքը։ Այդ անվիճելի ճշմարտություն է, քանի որ անասնաբուծության զարգացման և նրա մթերատվության բարձրացման վճռող պայմանը կերի կայուն բազան է։ Վերջին 5—6 տարվա ընթացքում անասնապահության զարգացման ասպարեզում ՍՍՀՄ-ում ձեռք բերված արմատական բեկման համար մենք առաջին հերթին

պարտական ենք ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի կողմից՝ անասնապահության կերի բազայի ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված և իրականացվող հիմնական միջոցառումներին։

Անասնապահական մթերքների արտադրության ավելացման գործում կարևոր նշանակություն ունի նաև յուրաքանչյուր մարզում, ռեսպուբլիկայում, ամեն մի տնտեսությունում եղած ռեզերվների հայտնաբերումը և օգտագործումը։ Խորազնին ուսումնասիրության դեպքում հազիվ թե գտնվի որևէ կոլտնտեսություն կամ սովխոզ, որը չունենա դեռ չօգտագործված, կամ համենայն դեպս, դեռ լրիվ չօգտագործված ռեզերվներ։

Ներկա հոդվածում մենք նպատակ ենք դրել կանգ առնել մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում եղած մի քանի այդպիսի կարևոր ռեզերվների վրա, որոնց ճիշտ օգտագործումը հնարավորություն կտա առանց մեծ միջոցներ ծախսելու զգալիորեն ավելացնել անասունների գլխաքանակը, բարձրացնել նրանց մթերատվությունը և հետևապես ավելացնել անասնապահական մթերքների արտադրությունը։

## 1. ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈՏԻ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՍՏԵՐՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի ավելացման գլխավոր ռեզերվը մայրական հոտի բեղմնավորման ճիշտ կազմակերպումը և ստերջության վերացումն է։

Մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում ստերջության վերացման ուղղությամբ վերջին տարիներում որոշ աշխատանք կատարվել է. 1955 թվականին, 1957 թվականի համեմատությամբ, ստերջ կովերի քանակը պակասեց 6%-ով, ոչխարներինը՝ 2%-ով։ Սակայն գոյություն ունեցող վիճակը դեռ հեռու է բավարար լինելուց։ 1958 թվականին ստերջ մնացած կովերի քանակը կոլտնտեսություններում կազմեց 12%. յուրաքանչյուր 100 կովից ստացվեց 87 հորթ, իսկ մի շարք կոլտնտեսություններում և առանձին շրջաններում կովերի ստերջության տոկոսը հասնում է մինչև 40—45-ի (Ղափան, Ալին)։ Առավել ևս լուրջ է վիճակը ոչխարաբուծության մեջ։ Ոչխարների ստերջությունը 1958 թվականին հասավ 15%-ի, իսկ առանձին շրջաններում էլ ավելի բարձր էր։ Ըստ 1-ը հունվարի 1959 թվականի ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում 100 մայր ոչխարից միջինը ստացվեց 85 գառ, իսկ 1958 թվականի նույն ժամկետում ստացվել էր ընդամենը 81 գառ։

Հանրահայտ է, որ ոչխարները շատ պտղաբեր կենդանիներ են. առանձին ցեղերի մոտ զույգ ծնող մաքիները կազմում են հոտի 20—25, երբեմն մինչև 50%-ը. իսկ Ռոմանովյան ցեղի մաքիները մեկ ծնից տալիս են միջինը 2—3 գառ։ Նրբագեղմ (մերինոսյան) ցեղերը և նրանց խառնածինները նույնպես շատ պտղաբեր են, զույգ ծնող մաքիների տոկոսը հասնում է 20—25-ի, իսկ առանձին հոտերում մինչև 50-ի։ «Բոլշևիկ» սովխոզում առաջավոր հովիվ Տ. Գ. Խարչենկոն կովկասյան նրբագեղմ ցեղի 100 մաքուց ստացել է 146 գառ։ Խտացրած ծին կազմակերպելու դեպքում առաջավոր ոչխարաբույծները 100 մաքուց ստանում են մինչև 200 գառ։

Հայկական ՍՍՌ կոլտնտեսություններում նրբագեղմ, կիսանրբագեղմ և կիսակոպտաբուրդ ոչխարների քանակը ընդհանուր հոտում դեռ 1958 թվականին կազմում էր 92%, այդ թվում նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարներինը՝ մոտ 40%, իսկ, ինչպես նշվեց, նրբագեղմ ցեղերը և նրանց խառնածինները ունեն բարձր պտղատվություն։ Այդ ապացուցվում է հենց մեր ռեսպուբլիկայի առաջավոր կոլտնտեսությունների փորձով, որոնք 100 մայրից ստանում են մինչև 110 գառ։

Խոշոր եղջերավոր անասունները նույնպես ունեն բարձր պտղատվություն։ Մատղաշների ճիշտ աճեցման, մայրական հոտի նորմալ կերակրման և խնամքի պայմաններում յուրաքանչյուր կով կամ տնտեսական սեռական հասունության հասած էգ հորթ ընդունակ է ամեն տարի սերունդ տալու։ Առանձին դեպքերում կովերը զույգ էլ են ծնում, իսկ խտացրած ծին կազմակերպելու դեպքում հնարավոր է լինում 100 կովից տարվա ընթացքում ստանալ մինչև 110—120 հորթ։

Վերջին տարիներում մեր երկրում լուրջ նվաճումներ են ձեռք բերվել գյուղատնտեսական կենդանիների ստերջության վերացման համար մղվող պայքարում։

Ներկայումս հիմնականում բացահայտված են այն պատճառները, որոնք առաջ են բերում կենդանիների նորմալ բեղունության խախտում և ստերջություն։ Այդ պատճառների վերացումն էլ հենց ստերջության վերացման մեթոդական լծակն է։

Շատ տարածված է այն կարծիքը, թե կովերի ստերջության միակ պատճառը վատ կերակրումը և պահվածքն է։ Այդ տեսակետը պաշտպանողների կարծիքով՝ բավական է բարելավել կենդանիների կերակրումը և պահվածքի պայմանները, որպեսզի լիովին վերանա ստերջությունը։ Որ լիարժեք կերակրումը և պահվածքի նորմալ պայմանները շատ կարևոր նշանակություն ունեն բարձր պտղատվություն ապահովելու և ստերջությունը խիստ կրճատելու գործում, անվիճելի է, բայց չպետք է մոռանալ, որ լավ կերակրումը ստերջության դեմ պայքարելու միակ միջոցը չէ, քանի որ կենդանիների չբեղմնավորվելու, կամ բեղմնավորվածների պտղի սաղմնային զարգացման նորմալ ընթացքի խախտման պատճառները շատ բազմազան են։

Դրա համոզիչ ապացույցը կարող է լինել այն փաստը, որ կովերի ստերջության բարձր տոկոս է նկատվում ո՛չ միայն այն տնտեսություններում, որտեղ կերակրման պայմաններն անբավարար կամ վատ են, այլ նաև ոչ քիչ դեպքերում, այնպիսի տնտեսություններում, որոնք լիովին ապահովված են կերերով։ Որպես օրինակ կարելի է բերել հենց մեր ռեսպուբլիկայի Լոռու տոհմային սովխոզը (Կալինինոյի շրջան), որն իր արտադրական ցուցանիշների մեծ մասով մեր ռեսպուբլիկայի առաջավոր անասնապահական տնտեսություններից մեկն է։ Սովխոզը լիովին ապահովված է կերերով թե՛ ամառային արոտային, թե՛ ձմեռային շրջանում։ Բայց չնայած դրան, կովերի ստերջությունը այստեղ դեռ շատ բարձր է և հասնում է մինչև 20%-ի։ Այդպիսի տնտեսություններում ստերջության բարձր տոկոսի պատճառներ կարող են լինել կենդանիների սեռական օրգանների հիվանդությունները, նեղ-ազգակցական բուծումը (ինբրիդինգը), կենդանիների բերի գալու մոմենտը ժամանակին չնկատելը և նրանց ժամանակին չբեղմնավորելը, արհեստական սերմնավորման ժամանակ անորակ սերմ-

նահեղուկի օգտագործումը, վիտամինների ու հանքային նյութերի պակասը մայր կենդանիների ու արտադրողների կերաբաժնում և այլն։ Այդպիսի դեպքերում միայն լավ կերակրելով իհարկե հնարավոր չէ վերացնել ստերջությունը. անհրաժեշտ է լինում կիրառել միջոցառումների ավելի լայն և ամբողջական կոմպլեքս։ Առաջավոր տնտեսությունների փորձը ցույց է տալիս, որ ստերջության դեմ հաջող պայքարելու համար ամենից առաջ անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով ուսումնասիրել և պարզել նրա առաջացման կոնկրետ պատճառները։ Այդ դեպքում է միայն հնարավոր մշակել և իրականացնել էֆեկտիվ միջոցառումներ։

ԱՄՆ-ում, որտեղ, ըստ մամուլի պաշտոնական տվյալների, կովերի ստերջությունը տատանվում է 2.5—15%-ի սահմաններում, այդ երևույթի հիմնական պատճառը համարում են կովերի կերակրումը մեծաքանակ խտացրած կերերով, նրանց կաթնատվության ավելացումը և բեղմնավորման ժամանակ թույլ տրվող թերությունները։ Բայց բանն այն է, որ ցածր մթերատվություն ունեցող տնտեսություններում ևս հաճախ կովերի ստերջության տոկոսը շատ բարձր է լինում։ Հետևաբար, էֆեկտիվ միջոցառումներ կիրառելու համար անպայման պետք է պարզել տվյալ տնտեսության համար նկատվող ստերջության բարձր տոկոսի կոնկրետ պատճառները։

Սովետական Միությունում ստերջության դեմ հաջողությամբ պայքարելու դրական փորձի բազմաթիվ օրինակներ կան։ Կանգ առնենք դրանցից միայն մեկի վրա։

Ինչպես հաղորդում է Պ. Ա. Վլասովը, Օրենբուրգի մարզի մի շարք շրջանների կոլտնտեսություններում կովերի ստերջությունը մի քանի տարի առաջ հասնում էր 16—53%-ի։ Մարզի անասնաբուժական փորձակայանը հինգ տարվա ընթացքում այդ կոլտնտեսություններում անցկացրեց հետևյալ կոմպլեքսային միջոցառումները.

ա) բարելավվեց անասունների կերակրումը, մասնավորապես հաշվի առնելով նրանց պահանջը վիտամինների և հանքային նյութերի նկատմամբ.

բ) ձմեռային շրջանում կիրառվում էր կենդանիների ամենօրյա սիստեմատիկ զբոսանք.

գ) հոտի վերարտադրության գործում սահմանվեց պլանայնություն, ուժեղացվեց հսկողությունը կովերի սեռական ցանկության դրսևորման և ժամանակին բեղմնավորվելու վրա.

դ) ուշադրություն դարձվեց արտադրող ցուլերի օգտագործման ռեժիմի և նրանց սերմնահեղուկի որակի վրա.

ե) առանձնակի ուշադրություն դարձվեց կովերի սեռական օրգանների հիվանդությունների բուժման վրա, օգտագործելով բուժման նորագույն միջոցները և մեթոդները.

զ) անասնաբուժական և զոոտեխնիկական հարցերին նվիրված մշտական զրուցակցություններ անցկացվեցին անասնապահների հետ՝ ծանոթացնելով նրանց ստերջության վերացման բնագավառում գիտության և անասնաբուժության առաջավորների ձեռք բերած նվաճումներին։

Այդ միջոցառումների հետևողական կենսագործման շնորհիվ 672 հիվանդ ստերջ կովերից բուժվեցին և իրենց վերարտադրողական ընդունակությունը վերականգնեցին 648-ը, կամ 97%-ը։ Այդ մարզի 9 կոլտնտեսություններում

ստերջությունը լրիվ վերացվեց. 8 կոլտնտեսություններում ստերջ մնացած կովերի թիվը հասցվեց մինիմումի՝ 0,7—4,5%-ի։

Նման միջոցառումներ ի վիճակի է իրականացնելու ամեն մի կոլտնտեսություն, ամեն մի սովխոզ։ Բերված օրինակը ցույց է տալիս միաժամանակ, որ ստերջության դեմ կիրառվող միջոցառումները դրական արդյունք են տալիս այն ժամանակ, երբ նրանք իրականացվում են կոմպլեքսային եղանակով և հետևողականորեն։

Ստերջության դեմ մղվող պայքարի կարևորությունը բացատրվում է նրանով, որ ստերջության բարձր տոկոսը ոչ միայն կասեցնում է հոտի նորմալ վերարտադրությունը, այլև խիստ անդրադառնում է կովի միջին կաթնատվության վրա։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ստերջ կովի կաթնատվությունը կերակրման և խնամքի նույնանման պայմաններում պակասում է 25—30 %-ով։ Ահա թե ինչու այդքան մեծ ուշադրության է արժանի մայրական հոտի ստերջության դեմ մղվող պայքարը։

## 2. ՀՈՏԻ ՃԻՇՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՆՈՐՄԱԼ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոտի ճիշտ կառուցվածքը կարևոր նշանակություն ունի նրա ընդլայնված վերարտադրությունն ապահովելու համար, առանց որի հնարավոր չէ հետևողականորեն ավելացնել անասնաբուծական մթերքների արտադրությունը։ Հոտի նորմալ վերարտադրության համար անհրաժեշտ է, որ նրա կազմում գերակշռի մայրական գլխաքանակը։ Մեր ռեսպուբլիկայի պայմաններում կովերի տեսակարար կշիռը սավարի հոտում 40—45 %-ից պակաս չպետք է լինի, իսկ քաղաքամերձ կոլտնտեսություններում և սովխոզներում այն պետք է կազմի առնվազն 50—55%։ Բայց իրականում շատ կոլտնտեսություններում կովերի քանակը հոտում 25—30 %-ից չի անցնում։

Լեռնային և մասամբ նախալեռնային շրջաններում խոշոր եղջերավոր անասունների հոտում բանող եզների տոկոսը հաճախ հասնում է 20—25-ի, որը շատ բացասաբար է անդրադառնում հոտի նորմալ կառուցվածքի վրա, խիստ իջեցնում է մայրական կազմի տեսակարար կշիռը։ Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը հնարավորություն է տալիս զգալիորեն կրճատելու եզների քանակը նախիրում և նրանց հաշվին ավելացնելու մայրական կազմը։ Մեր պայմաններում կարելի է հանձնարարել հոտի օրինակելի կառուցվածքի հետևյալ երկու վարիանտները, որոնք կարող են ճշտվել, ելնելով տնտեսության կոնկրետ պայմաններից (տե՛ս բերված աղյուսակը)։

Մերձքաղաքային կոլտնտեսություններում ու սովխոզներում կովերի տեսակարար կշիռը նպատակահարմար է հասցնել մինչև 55 %-ի (և ավելի), իսկ հեռավոր (խորքային) շրջաններում կարելի է 45-ից մի փոքր պակասեցնել, թողնելով 41—42%։

Ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում դեռ ցածր է նաև մաքիների տեսակարար կշիռը ոչխարների հոտում։ Միջին տոկոսը 50—55-ից չի անցնում, այն ժամանակ, երբ հոտի նորմալ կառուցվածքի դեպքում մաքիների տոկոսը հոտում 70-ից պակաս չպետք է լինի։ Հաշվարկումները ցույց են տալիս, որ եթե մաքիների քանակը հոտում ավելացվի 18—20 %-ով, ապա ոչխարի մսի

Տավարի հոտի օրինակելի կառուցվածք

| Անասունների սեռահասակային խումբը | 1-ին վարիանտ՝ կովերի տեսակարար կշռի 50 %-ի դեպքում | 3-րդ վարիանտ՝ կովերի տեսակարար կշռի 30 %-ի դեպքում |
|---|---|---|
| Արտադրող ցուլեր | 1 | 1 |
| Կովեր | 50 | 45 |
| Երինջներ | 9 | 8 |
| Էգ հորթեր մինչև 1 տարեկանից բարձր | 12 | 11 |
| Էգ հորթեր մինչև 1 տարեկան | 13 | 14 |
| Ամորձատվածներ | 3 | 7 |
| Ցուլիկներ 1 տարեկանից բարձր | 2 | 3 |
| Ցուլիկներ մինչև 1 տարեկան | 8 | 11 |
| Ընդամենը | 100% | 100% |

արտադրությունը միայն դրա հաշվին կավելանա 20—25%-ով, իսկ դա նշանակում է լրացուցիչ արտադրել մինչև 3000 և ավելի տոննա ոչխարի միս։

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս կան դեռ չօգտագործված զգալի ռեզերվներ։ Խոշոր և մանր եղջերավոր անասունների հոտի կառուցվածքում եղած թերությունները ուղղելու դեպքում հնարավոր է լրացուցիչ արտադրել մի քանի հազար տոննա միս և տասնյակ հազար տոննա կաթ։

## 3. ԽՈՒՍԱՓԵԼ ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈՏԻՑ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՉՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ԽՈՏԱՆՈՒՄԻՑ։ ԼԱՅՆՈՐԵՆ ԿԻՐԱՌԵԼ ԽՈՇՈՐ ԵՎ ՄԱՆՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Հոտի նորմալ վերարտադրության պայմաններում բնական ամորտիզացիան (խոտանումը) 5—8%-ից չպետք է անցնի, բայց շատ հաճախ խոտանում են մայրական հոտի մինչև 20—25%-ը, ձգտելով արհեստականորեն բարձրացնել կովի միջին կաթնատվությունը։ Գյուղատնտեսական կենդանիների բազմացման և հոտի ընդլայնված վերարտադրության բնագավառում, հատկապես Սովետական Միությունում, վերջին տարիներում ձեռք են բերվել լուրջ նվաճումներ, որոնք հնարավորություններ են տալիս վերացնելու այն պատճառները, որոնք խախտում են կենդանիների բազմացման ունակությունները։ Ուստի ոչ մի մայր կենդանի, որը կարող է դեռ բազմանալ, պտղաբերել, չպետք է խոտանել։ Մայրական հոտը պետք է պահպանել ամենայն խնամքով և խոտանում թույլ տալ միայն բացառիկ դեպքերում, երբ մանրակրկիտ հետազոտությունները հաստատում են, որ կենդանին իրոք որ անդառնալիորեն կորցրել է պտղաբերելու ընդունակությունը։ Միաժամանակ տնտեսությունների ղեկավարները և մասնագետները պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնեն մայրական հոտի համալրման վրա լավ զարգացած լիարժեք մատղաշների հաշվին, աշխատելով, որպեսզի ամեն մի խոտանված կովի փոխարեն լինի առնվազն 2—3 համալրող էգ հորթեր։

Համալրող (վերանորոգող) մատղաշների ճիշտ աճեցումը մայրական հոտի համալրման և ընդլայնման հիմնական աղբյուրն է։ Այդ նպատակի համար

նրանք պետք է առանձնացվեն դեռ վաղ՝ 3—4 ամսական հասակից և դրվեն աճեցման-դաստիարակման բարենպաստ պայմանների մեջ։ Աճեցման ճիշտ սիստեմի դեպքում ՍՍՌՄ-ում բուծվող տավարի գրեթե բոլոր ցեղերի հորթերն էլ 16—18 ամսական հասակից ընդունակ են բեղմնավորվելու, պտղաբերելու և լավ զարգացած, բարձր մթերատու կենդանի դառնալու։ Այդպիսի երինջների առաջին ծինը տեղի է ունենում սովորաբար 25—27 ամսական հասակում։ Բայց շատ օրինակներ կարելի է բերել հենց մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններից, երբ էգ հորթերը արտադրական հոտ են փոխադրվում 3,5—4 տարեկան հասակում, իսկ երբեմն էլ ավելի ուշ։ Գրականության մեջ տվյալներ են բերվում այն մասին, որ Միության առանձին մարզերում առաջին անգամ ծնած հորթերի ընդհանուր քանակից 5—6 տարեկանները կազմել են մինչև 78%։ Դրա պատճառն այն է, որ մատղաշը կաթնային և մանավանդ ետկաթնային շրջանում ճիշտ չի աճեցվում, բերի գալու ժամանակին անհրաժեշտ կենդանի քաշ և գիրություն չի ունենում, այդպիսի կենդանիների սեռական վերարտադրության օրգանները նույնպես նորմալ զարգացած չեն լինում։ Այդ ամենի հետևանքով մեծ թվով սեռունքի հասած հորթեր չեն բեղմնավորվում և մնում են ստերջ։ Հորթերի ստերջ մնալու պատճառներից մեկն էլ այն է, որ նրանց հաճախ բեղմնավորում են ժամանակից շուտ 14—15 ամսական հասակում, հաշվի չառնելով նրանց ընդհանուր ֆիզիոլոգիական զարգացումը, մանավանդ կենդանի քաշը։ Բնական է, որ այդպիսի կենդանիները կամ չեն բեղմնավորվում, կամ եթե բեղմնավորվում էլ են, պտուղը մինչև վերջ չեն կարողանում զարգացնել, տեղի է ունենում վիժում, իսկ եթե ծնում էլ են, ապա հորթը լինում է թերաճ, թույլ, ոչ կենսունակ։

Ստերջության վերացման և հոտի տոհմային որակի բարձրացման արմատական միջոցառումներից մեկը արհեստական սերմնավորման եղանակի լայն կիրառումն է, որ մեր ռեսպուբլիկայում, ցավոք սրտի, դեռ բավարար տարածում չի ստացել։

Ներկայումս ռեսպուբլիկայում գործում են ընդամենը 5 պետական տոհմային և արհեստական սերմնավորման կայաններ, որոնց աշխատանքները դեռ հարկ եղած չափով չեն ծավալվել։ Անհրաժեշտ է առաջիկա մեկ-երկու տարում այդ կայանների թիվը հասցնել առնվազն 10-ի, ապահովել նրանց անհրաժեշտ թվով բարձրարժեք տոհմային արտադրողներով, մասնագիտական կադրերով, նյութա-տեխնիկական բազայով և տրանսպորտով։ Աշխատանքների ճիշտ կազմակերպման դեպքում արհեստական սերմնավորման կայանների այդպիսի ցանցը հնարավորություն կտա արհեստական սերմնավորմամբ հիմնականում ընդգրկելու կոլտնտեսությունների ու սովխոզների թե՛ խոշոր և թե՛ մանր եղջերավոր անասունների մայրական հոտը։ Արհեստական սերմնավորման մասսայական կիրառումը հնարավորություն կտա առավելագույն չափով օգտագործելու բարձրարժեք տոհմային արտադրողներին, որը կնպաստի ոչ միայն ստերջության վերացմանը, այլև հոտի տոհմային կազմի բարելավմանը։ Արհեստական սերմնավորման եղանակի մասսայական կիրառումն անասնաբուծության մթերատվության բարձրացման ամենակարևոր լծակներից մեկն է և այն պետք է լայն կիրառում գտնի ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում և սովխոզներում։

## 4. ԽՈՇՈՐ ՈՒ ՄԱՆՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽՈԶԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ԲՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մսի արտադրության ավելացման կարևորագույն ռեզերվներից մեկը, մասնավորապես մեր ռեսպուբլիկայի պայմաններում, խոշոր և մանր եղջերավոր անասունների բտման կազմակերպումն է ամառային արոտներում, որոնց տարածությունները կազմում են ռեսպուբլիկայի ամբողջ հողատարածության մոտ 2/3-ը։ Գիտական ուսումնասիրությունները և առաջավոր կոլտնտեսությունների փորձը հաստատում են, որ անասունների բտումը ռացիոնալ ձևով կազմակերպելու դեպքում (հոտի ճիշտ կոմպլեկտավորումը ըստ սեռա-հասակային խմբերի, ցուլիկների, խառնված ցուլերի, խոյերի և խոյիկների ամորձատումը, արոտների հերթափոխ օգտագործումը, բտվող անասունների սիստեմատիկ կշռումները՝ օրվա քաշաճը ստուգելու համար և այլն), հնարավոր է ամառային արոտներում, միայն արոտակերակրի օգտագործման հաշվին, առանց լրացուցիչ կերակրման, ապահովել խոշոր եղջերավոր անասունների բարձր քաշաճ օրական մինչև 1—1,2 կգ և ավելի, ոչխարներին օրական քաշաճ 140—150 գ։ Այլ կերպ ասած, միայն արոտային շրջանում՝ 110—120 օրվա ընթացքում յուրաքանչյուր խոշոր եղջերավոր անասունի կենդանի քաշը հնարավոր է ավելացնել 100 կգ-ով, իսկ մեկ ոչխարինը՝ մինչև 15 կգ-ով։ Արոտային բտման մեծ առավելություններից մեկն էլ այն է, որ ստացված միսը ունենում է անհամեմատ ավելի ցածր ինքնարժեք, քան խտացրած կերերով բտելիս։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մսուրային բտման ժամանակ, երբ օգտագործում են խտացրած կերեր, չոր խոտ և հյութալի կերեր, 1 կգ քաշաճի վրա ծախսվում է ոչ պակաս 9—10 կերի միավոր և 1 կգ քաշաճի ինքնարժեքը կազմում է ոչ պակաս 4—5 ռուբլի, իսկ արոտային բտման ժամանակ այն 1 ռուբլուց չի անցնում։

Անցյալ տարվա ամառային ամիսներին մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններն ու սովխոզները արոտային բտման էին դրել մոտ 20 հազար խոշոր եղջերավոր և 200 հազար մանր եղջերավոր անասուններ։ Բայց այդ թիվը համեստ է և պետք է զգալիորեն ավելացնել, քանի որ կան անհրաժեշտ ռեզերվներ. կովերի գլխաքանակը կոլտնտեսություններում ու սովխոզներում առ 1/10—1959 թվականի դրությամբ կազմում է ավելի քան 110 հազար, յուրաքանչյուր 100 կովից ստացված է 85—87 հորթ, որոնց 50%-ը արուներ են։ Դա նշանակում է, որ միայն մեկ տարում ստացվող ցուլիկների քանակը կկազմի ոչ պակաս 40—45 հազար գլուխ։ Կոլտնտեսություններն ու սովխոզները տարեկան ստանում են մոտ 800 հազար գլուխ մանր եղջերավոր անասունների մատղաշ, որոնց 50%-ը նույնպես արուներ են։ Հասակավոր ոչխարների հոտից յուրաքանչյուր տարի խոտանվում են նաև զգալի թվով ծերացած, ցածր մթերատու կենդանիներ։ Այսպիսով, հնարավորություն կա յուրաքանչյուր տարի արոտային բտման դնել ոչ պակաս 65—70 հազար գլուխ խոշոր եղջերավոր և մինչև 400 հազար գլուխ մանր եղջերավոր անասուններ։ Բտումն անհամեմատ ավելի մեծ արդյունք է տալիս, երբ ցուլիկներն ու խառնված ցուլերը, ինչպես և խոյերն ու խոյիկները նախօրոք ամորձատվում են։

Երևանի Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի դոցենտ Ա. Բաբուրթյանը առաջարկել է 2—4 ամսական խոյիկներին ամորձատելու նոր եղանակ՝ մակամորձիների և ամորձիների հարակցահյուսվածքային նեցու-

կի պահպանմամբ։ Հեռացվում է միայն ամորձիի պարունակությունը — պարենխիման։ Մասսայական փորձերը ցույց են տվել ոչխարների ամորձատման այդ եղանակի մի շարք առավելությունները ամորձատման սովորական եղանակների նկատմամբ։

## ա. Խոշոր եղջերավոր անասունների ձմեռային բտումը

Ընդհանրապես ամառային բտման մի շարք առավելությունները, չպետք է թերագնահատել նաև աշնան-ձմեռային մսուրային բտման նշանակությունը։ Ձմեռային բտումը, որպես կանոն, պետք է կազմակերպել ընտրման եղանակով, այսինքն բտման պետք է դնել այն կենդանիներին, որոնք այս կամ այն պատճառով խոտանվում են որպես մսացու օգտագործելու նպատակով։ Այդ տիպի կենդանիները պարտադիր կերպով պետք է բտման դնել, որից հետո միայն օգտագործել որպես մսացու։ Այդ միջոցառումը հնարավորություն կտա խուսափելու միջակից ցածր որակի մսացու հանձնելուց և նկատելիորեն ավելացնելու մսի արտադրությունը։ Միջակից ցածր մսացու հանձնելու հետևանքով ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները տարեկանորեն իջեցնում են մսի արտադրությունը, որը միաժամանակ բարձրացնում է նրա ինքնարժեքը և կերաքանակի ոչ ռացիոնալ ծախսման պատճառ է դառնում։

Ձմռան-մսուրային շրջանում անասունների բտումը կազմակերպելու համար 1960 թվականին ռեսպուբլիկայի բազմաթիվ կոլտնտեսություններում կան բարենպաստ պայմաններ, մասնավորապես կերի պաշարներ։ Առ 1/10—1959 թվականի, անցյալ տարվա նույն ժամկետի համեմատությամբ, կոլտնտեսություններում կուտակվել է 113 հազար տոննա ավելի խոտ և մոտ 100 հազար տոննա ավելի սիլոս։ Շատ կոլտնտեսություններ մսուրային շրջանի համար առանձնացրել են նաև բավական քանակությամբ հատիկային և այլ տեսակի խտացրած կերեր։

## բ. Միանվագ մերունների օգտագործումը վերարտադրական նպատակով

Մսի արտադրության ավելացման կարևոր ռեզերվներից է միանվագ մերունների (РАЗОВЫЕ МАТКИ) օգտագործումը։ Առաջավոր կոլտնտեսությունները ու սովխոզները այդ ռեզերվների հաշվին արտադրում են հարյուրավոր տոննա խոզի միս։ Ռյազանի մարզի կոլտնտեսություններն ու սովխոզները 1959 թ. ընթացքում վաճառեցին երեք անգամ ավելի միս, քան նախատեսված էր տարեկան պլանով։ Մսի արտադրության ավելացման այդպիսի բարձր տեմպերին մեծ չափով նպաստեց միանվագ մերունների օգտագործումը։ Այդ մարզի կոլտնտեսությունները և սովխոզները ծրագրեցին աշնան ամիսներին 35 հազար գլուխ հիմնական մերուններից բացի բեղմնավորել նաև 100 հազար գլուխ միանվագ մերուններ, որը հնարավորություն կտա 1960 թվականի առաջին կիսամյակում ստանալ առնվազն 700 հազար խոճկոր։ Այդ հիանալի առաջավոր փորձը պետք է օգտագործել նաև մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում։

## 5. ԱՄԵՆ ԿԵՐՊ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՄՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՂԲՅՈՒՐՆ Է

*Թռչնաբուծությունը անասնաբուծության ամենավաղահաս ճյուղերից մեկն է։ Գյուղատնտեսական թռչունները՝ բադերը, սագերը, հնդկահավերը, ինչպես նաև հավերը շատ արագ են աճում և չափազանց արժեքավոր են մսի արտադրության տեսակետից։ Բադիկը ձվից դուրս գալու մոմենտին կշռում է ընդամենը 50 գ. իսկ արդեն երկու ամսական հասակում նրա կենդանի քաշը հասնում է 2 կգ-ի և պատրաստ է մորթի։ Բազմաթիվ առաջավոր տնտեսություններ յուրաքանչյուր բադի մեկ տարում աճեցրած սերնդից ստանում են 100—120 կգ միս։ Այլ կերպ ասած, յուրաքանչյուր մայր-բադ իր սերնդով տարվա ընթացքում տալիս է այնքան միս, որքան կարող են տալ երեք ոչխարը, կամ մեկ տարեկան խոշոր եղջերավոր անասունը։ Իրենց վաղահասությամբ բադերին քիչ են զիջում նաև սագերը, հնդկահավերը և մսաձվատու ցեղերի հավերը։ Խոլմոգորյան ցեղի սագերը 3 ամսական հասակում կշռում են 4.5—5 կգ։ Հավերը հինգ ամսական հասակում իրենց սկզբնական կենդանի քաշը ավելացնում են 40—50 անգամ։ Մսա-ձվատու ցեղերի մատղաշների կենդանի քաշը 90—100 օրական հասակում հասնում է մինչև 1,3—1,5 կգ-ի։ Տնային թռչունների արժեքավոր տնտեսական ու բիոլոգիական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք շատ բարձր են հատուցում ծախսած կերը։ 1 կգ մսի արտադրության վրա թռչունը ծախսում է ընդամենը 3—3,5 կգ կերի միավոր, մոտ 30—35%-ով քիչ, քան ամենավաղահաս գյուղատնտեսական կենդանին՝ խոզը։*

*Մսի արտադրության արագ ավելացման տեսակետից առանձնապես մեծ արդյունք է տալիս մսացու ճտերի (բրոյլերների), հնդկահավերի և ջրլող թռչունների մատղաշների աճեցումը։*

*Բրոյլերների աճեցումը շատ մեծ զարգացում է ստացել արտասահմանյան մի շարք երկրներում։ Սովետական Միության մի շարք մարզերում և ռեսպուբլիկաներում վերջին մեկ-երկու տարում բրոյլերների աճեցումը նույնպես սկսել է զարգանալ։ Մասսայական արտադրական փորձերը ցույց են տալիս, որ մսացու մատղաշների աճեցման այդ պրոգրեսիվ եղանակը լավ արդյունք է տալիս միայն այն ժամանակ, երբ այդ նպատակի համար օգտագործում են մսա-ձվատու ցեղերի մատղաշները կամ նրանց և ձվատու ցեղերի տրամախաչումից ստացված առաջին սերնդի խառնածինները։*

*Այդ եղանակով աճեցված և բտված մատղաշների միսը լինում է բարձրորակ և ցածր ինքնարժեք է ունենում։ Էջմիածնի շրջանի Աղավնատուն գյուղի կոլտնտեսության թռչնաբուծական ֆերման այս տարի բտման դրեց մոտ 3000 ռուսական սպիտակ ցեղի մատղաշ աքաղաղներ։ Լավ խնամքի և կերակրման շնորհիվ ապահովվեց աճեցվող գլխաքանակի պահպանման բարձր տոկոս (ավելի քան 97%) և բարձր քաշաճ։ 90—95 օրական հասակում աքաղաղների կենդանի քաշը կազմեց մոտ 1 կգ, իսկ 1 կգ մսի (կենդանի քաշը) ինքնարժեքը՝ ընդամենը 5 ռուբ. 50 կոպ.։ Բարձր արդյունք է տալիս վերջին տարիները Հայաստանում ստեղծված նոր ցեղային խմբի հավերի (մսա-ձվատու ուղղության) ու ռուսական սպիտակ ցեղի հավերի արդյունաբերական տրամախաչումից ստացված առաջին սերնդի խառնածինների մատղաշների բր-*

տումբ։ Էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկայում բտման են դնում հիմնականում այդպիսի խառնածին մատղաշներ։ Անցյալ տարի այդ ֆաբրիկան սպառությանը հանձնեց՝ 560 ցենտներ թռչնի միս—երկու անգամ ավելի քան 1957 թ.

## Հատուկ ուշադրություն սագաբուծության զարգացմանը

*Մեր ռեսպուբլիկայում, բնական արոտների մեծ տարածությունների առկայության շնորհիվ, առանձնապես նպաստավոր պայմաններ կան սագաբուծության զարգացման համար, քանի որ սագերը հիմնականում արոտային թռչուններ են և գրեթե առանց լրացուցիչ խտացրած կերերի օգտագործելու, միայն արոտականաչի հաշվին լավ բտվում են և, ինչպես նշվեց, արդեն 3 ամսական հասակում ունենում են 4,5—5,5 կգ կենդանի քաշ։ Արոտային պայմաններում աճեցրած սագի միսն ունենում է շատ ցածր ինքնարժեք։ Լենինականի թռչնաբուծական ֆաբրիկայում Արփի լճի սագաբուծական ֆաբրիկայում անցյալ տարի աճեցվել է մոտ 1000 սագ և 1 կգ մսի ինքնարժեքը կազմել է ընդամենը 5 ռուբլի։*

*Ռեսպուբլիկայի միայն լեռնային և նախալեռնային շրջանների կոլտնտեսությունները հնարավորություն ունեն պահելու ոչ պակաս 100 հազար մայր-սագ և տարեկան աճեցնել արոտականաչի հաշվին ոչ պակաս 500 հազար սագ, իսկ դա նշանակում է՝ լրացուցիչ արտադրել մինչև 2,5 հազար տոննա թռչնի միս։ Ռեսպուբլիկայի ցածրադիր և մի շարք նախալեռնային շրջաններում զարգացման մեծ հեռանկարներ ունի նաև հնդկահավաբուծությունը, իսկ լճակներով և ջրավազաններով հարուստ շրջաններում՝ նաև բադաբուծությունը։*

*Յոթնամյակում թռչնի մսի տեսակարար կշիռը մսի համախառն արտադրանքի մեջ պետք է կազմի ոչ պակաս 14—15%, իսկ ներկայումս մեր ռեսպուբլիկայում հազիվ 1—2% է կազմում։ Թռչնի մսի արտադրանքը մեզ մոտ պետք է ամեն կերպ ավելացնել, դրա համար կան նպաստավոր պայմաններ։*

## 6. ՌԱՑԻՈՆԱԼ ԿԵՐՊՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՎԵՐԱՄՇԱԿՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԷԺԱՆ ԿԵՐԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՂԲՅՈՒՐ

*Հայաստանում լայն զարգացում է ստացել գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերությունը, որի մի շարք ճյուղերից ստացվող մնացուկներն արժեքավոր և էժան կերերի աղբյուր են հանդիսանում։ Դրանց թվին են պատկանում շաքարի ճակնդեղի մազը, գարեջրի արդյունաբերության մնացուկը՝ բարդան, խաղողի վերամշակման մնացուկը՝ մզվածքը, կաթի վերամշակման մնացուկները, սպանդանոցային մնացուկները՝ (արյան և մսաոսկրային ալյուրը), բոժոժի վերամշակման մնացուկները՝ շերամի որդի հարսնյակները, ձկնարդյունաբերության մնացուկները՝ ձկան ալյուրը, պահածոների արդյունաբերության մնացուկները՝ պոմիդորի կորիզները և մզվածքի մնացուկները և այլն։*

*Կերերի այդ լրացուցիչ ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը հնարավորություն կտա բտման դնել հազարավոր գլուխ անասուններ և թռչուններ։*

*Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել խաղողի մզվածքի օգտագործման վրա։ Մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվին, որ խա-*

ղողի կորիզը իր սննդարարությամբ գրեթե չի զիջում հատիկային կերերին, իսկ այդ մնացուկից մեր ռեսպուբլիկայի խաղողագործական շրջաններում տարեկան ստացվում է մի քանի տասնյակ հազար տոննա, քանի որ գինու կազմում են վերամշակվող խաղողի մոտ 25%-ը։ Խոզերի և թռչունների համար խաղողի մզվածքը արժեքավոր և ըստ էության ձրի կեր է։ Մեկ տոննա խաղողի վերամշակումից ստացվում է ավելի քան 200 կգ մզվածք և 40—50 կգ դրոժներ. 1 կգ մզվածքը պարունակում է 330 գ ջուր և զանազան նյութեր և 670 գ չոր նյութ։ Օդաչոր մզվածքի 39%-ը կազմում են կորիզներ, իսկ 51%-ը՝ վեգետատիվ մնացորդները։ Խոզերը օրական ուտում են մինչև 3—4 կգ խաղողի մզվածք, իսկ թռչունները՝ 25—30 գ։ Փորձերը ցույց տվեցին, որ հավերի կերաբաժնում հատիկային կերերի 50%-ը խաղողի կորիզով փոխարինելու դեպքում լրիվին պահպանվում է նրանց մթերատվության մակարդակը։ Էժան կերի այդ աղբյուրը խնամքով և ռացիոնալ օգտագործելու դեպքում կարելի է մի քանի հազար տոննա լրացուցիչ խոզի ու թռչնի միս և մեծ քանակությամբ ձու ստանալ։

Լիարժեք սպիտակուցի հարուստ աղբյուր են հանդիսանում շերամի որդի հարսնյակները, հատկապես թռչունների համար։ Մեկ կիլոգրամ հարսնյակները պարունակում են 600 գ մարսելի սպիտակուց։ Ածան հավերի կերաբաժնում օրական 8—10 գ հարսնյակների ավելացումը 15—20%-ով ավելացնում է նրանց ձվատվությունը։ Բավականաչափ տարածված է այն կարծիքը, որ շերամի որդի հարսնյակների օգտագործումը որպես կեր անհաճ համ և հոտ է հաղորդում թռչունների մսին և ձվին։ Այդ ճիշտ է միայն այն դեպքում, երբ թռչունները կերակրվում են գլխավորապես այդ կերով, օգտագործելով օրական 25—30 գ (չոր վիճակում), բայց երբ այդ շերամի որդի հարսնյակները տրվում են մյուս հատիկա-ալյուրային և այլ կերերի հետ միասին, օրական 10—12 գ-ի սահմաններում, ոչ մի անհաճ հոտ կամ համ մսին կամ ձվին չի հաղորդվում, ստացված մթերքները ոչնչով չեն տարբերվում այդպիսի կեր չստացած թռչունների մթերքներից։ Այդ լրիվին հաստատվեց Հայկական ՍՍՌ Ֆիզիոլոգիայի ինստիտուտում և Էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկայում մեր դրած փորձերով։

Հանրահայտ է, որ կաթի վերամշակման մնացուկները, ինչպես, օրինակ, շիճուկը, հիանալի կեր է խոզերի համար, բայց մինչև հիմա էլ այդ արժեքավոր մնացորդների զգալի մասը որպես կեր չի օգտագործվում և անտեղի կորչում է։ Նույնը կարելի է ասել պահածոների արդյունաբերության մնացորդների մասին։

Արդյունաբերության բոլոր արժեքավոր մնացուկները պետք է խնամքով պահպանել կորստից և որպես լրացուցիչ կերի աղբյուր օգտագործել անասնաբուծության մեջ։

## 7. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ Ի ՍՊԱՍ ԴՆԵԼ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

### ա. Կենդանիների օրգանիզմի ֆիզիոլոգիական խթանումը

Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների վերարտադրական ֆունկցիայի ակտիվացման ու նրանց մթերատվության բարձրացման գործում մեծ դեր ունի օրգանիզմի ֆիզիոլոգիական խթանումը, այլ կերպ ասած՝ գյուղատնտեսական կենդանիների պոտենցիալ ունակությունների մաքսիմալ օգտա-

գործումը։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրգանիզմի շատ սիստեմներ սովորական պայմաններում գործում են իրենց պոտենցիայի մոտավորապես մեկ երրորդի սահմաններում։ Այս փաստը խոսում է այն լուրջ ռեզերվների մասին, որոնք կարող են գործի դրվել օրգանիզմի վրա նպատակային ներգործելու, նրա համապատասխան սիստեմների ֆիզիոլոգիական ֆունկցիան խթանելու միջոցով։

Մի շարք փորձերով հաստատված է, որ ֆիզիոլոգիական խթանման հիմքում ընկած է օրգանիզմի նյութափոխանակության փոփոխումը, որի հետևանքով ասիմիլյացիոն պրոցեսները գերակշռում են դիսիմիլյացիոն պրոցեսների նկատմամբ. ընդ որում յուրաքանչյուր խթանիչ, բացի սպեցիֆիկ ներգործությունից այս կամ այն օրգանի կամ սիստեմի վրա, առաջացնում է նաև ամբողջական օրգանիզմի բիոտոնուսի ակտիվացում, քանի որ յուրաքանչյուր խթանում ինչ-որ չափով միշտ էլ շոշափում է նեյրոհումորալ կարգավորման բոլոր օղակները՝ օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական պրոցեսների ակտիվացման իմաստով։

Բավականաչափ լայն տարածում ստացած խթանիչներից կարելի է նշել ЛСБ (лечебная сыворотка Беленького) պրեպարատը, որն իրենից ներկայացնում է մորթած տավարի չափազանց թույլ դեստրուկցիայի ենթարկված արյան շիճուկը։

Փորձերը ցույց են տվել, որ այդ շիճուկի պարենտերալ ներարկման դեպքում կենդանիների օրգանիզմում բարձրանում է ինչպես ընդհանուր, այնպես էլ, մասնավորապես, սպիտակուցային նյութափոխանակությունը։

Այդ շիճուկի օգտագործումը դրական արդյունք է տալիս մասնավորապես կենդանիների բտումը խթանելու տեսակետից։ Խոզերի վրա դրված փորձերը ցույց տվին, որ փորձնական խմբի կենդանիները 1 կգ քաշի վրա ծախսում են 5,4 կերի միավոր, իսկ կոնտրոլ խմբի կենդանիները՝ 6,1 կերի միավորով ավելի։

Խոշոր եղջերավոր անասունների բտման ժամանակ ЛСБ պրեպարատով մշակված փորձնական խմբի կենդանիների օրական միջին քաշը 107 օրվա ընթացքում կազմեց 635 գ, իսկ կոնտրոլ խմբի կենդանիներինը՝ 563 գ։ 1 կգ քաշի վրա փորձնական խմբում ծախսվել է 7,9 կգ կերի միավոր, իսկ կոնտրոլ խմբում՝ 9,0 կերի միավոր։ Միաժամանակ փորձնական խմբում 2,5 %-ով ավելացել է մսի ելքը, որ առանձնապես կարևոր նշանակություն ունի։

Ակադ. Ն. Գ. Բելենկու առաջարկած այդ պրեպարատը դրական արդյունք է տալիս նաև կենդանիների սեռական ֆունկցիայի խթանման տեսակետից. այն նկատելիորեն բարձրացնում է արտադրողների սեռական ակտիվությունը և միաժամանակ նպաստում է նրանց սերմնահեղուկի քանակի ավելացմանն ու որակական ցուցանիշների բարելավմանը։

Առանձնապես ցայտուն կերպով է դրսևորվում այդ խթանիչի դրական ներգործությունը, երբ ներարկվում է սեռական ցածր ակտիվություն ունեցող և վատորակ սերմնահեղուկ տվող արտադրողներին։ Այդպիսի արտադրողներին 2—3 ներարկում կատարելուց հետո (կգ կենդանի քաշին 2 մլ հաշվով) նկատելիորեն բարելավվում է նրանց սեռական ակտիվությունը և սերմի որակը։

Այդ պրեպարատը միաժամանակ խթանում է նաև էգ կենդանիների սեռական ֆունկցիան։

Տերջ մնացող կովերի վրա կատարած փորձերը ցույց տվին, որ ЛСБ-ով մշակելուց հետո բոլոր տերջ կովերը (բացառությամբ 1-ի) նորից բերի եղան, այն ժամանակ, երբ ստուգիչ խմբում, կերակրման և խնամքի հավասար պայմաններում, կովերի 50%-ը բերի չեկավ։

Արտադրության մեջ իր համար հաջողությամբ ճանապարհ է հարթում ոչխարների բազմապտղությունը խթանող հորմոնալ մեթոդը, որն առաջարկել է ակադ. Մ. Մ. Զավադովսկին։ Որպես խթանիչ հորմոն նա առաջարկել է հղի զամբիկի արյան շիճուկը, որին տվել է СЖК (сыворотка жеребой кобылы) անունը։ 1 լիտր այդպիսի շիճուկով կարելի է ներարկել 100 մաքի (յուրաքանչյուրին 1200 մկնային միավոր)։ Դեռ 1942—1943 թթ. СЖК-ով ՍՍՌՄ-ում մշակվեց մեկ միլիոն ոչխար։

Մասսայական փորձերը ցույց են տվել, որ այն ոչխարները, որոնք մշակվում են այդ խթանիչով և բեղմնավորվում են առաջին սերմնավորման ժամանակ, մեկ ծնից տալիս են 160—180%, իսկ երբեմն մինչև 200% գառ։

Առաջին սերմնավորման ժամանակ բեղմնավորված ոչխարների մոտ 50%-ը կարող են զույգեր ծնել, մաքիների 8%-ը տալիս է երեքական գառ, իսկ մոտ 2%-ը՝ չորս և նույնիսկ հինգ գառ։

Կարակուլյան ցեղի ոչխարներին թուրքմենական, ուզբեկական, ղազախական և ուկրաինական ռեսպուբլիկաների մի շարք սովխոզներում ու կոլտնտեսություններում СЖК-ով մշակելու շնորհիվ, գառների ելը 100 մաքուց կազմեց 161-ից մինչև 204 գլուխ։ Փորձերը միաժամանակ ցույց են տվել, որ մաքիների բազմապտղությունը հորմոնալ պրեպարատի ազդեցության տակ շարունակվում է 3—4 տարի։

Այդ պրեպարատի փորձարկումը մեր ռեսպուբլիկայի մի քանի տնտեսություններում առաջին անգամ ձեռնարկվել է այս տարվանից։ СЖК-ն ավելի քան 20 տարվա ընթացքում օգտագործվել է երկրի զանազան շրջաններում և մարզերում, բայց արդյունքները միշտ չէ, որ միանման են եղել, ոչ բոլոր դեպքերում է այդ խթանիչը դրական արդյունք տվել։ Ուստի պետք է նկատի ունենալ, որ ֆիզիոլոգիական խթանումը դրական արդյունք է տալիս միայն այն դեպքում, երբ կիրառվում է միջոցառումների ամբողջական կոմպլեքս՝ մայրական հոտի և արտադրողների ճիշտ կերակրում, նորմալ խնամք, սերմնավորման տեխնիկայի կատարելագործում, կենդանիների սեռական օրգանների պրոֆիլակտիկա, բուժում և այլն։

Մեր կարծիքով, այդ խթանիչը մեծ հեռանկարներ ունի և պետք է նախօրոք մշակված ծրագրով լայնորեն փորձարկվի նաև մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում և սովխոզներում։

### բ. Արհեստական լուսավորության օգտագործումը թռչունների վերարտադրական ֆունկցիան և մթերատվությունը խթանելու նպատակով

Երկարատև ուսումնասիրություններով հաստատված է, որ թռչունների սեռական ֆունկցիան խթանող ամենահզոր գործոններից մեկը լույսն է—լուսային օրվա տևողությունը։ Ապացուցված է, որ երբ լուսային օրվա տևողությունը 12—13 ժամից պակաս է լինում, նկատելիորեն իջնում է հավերի և մյուս տնային թռչունների ձվատվությունը, և, ընդհակառակը, երբ լուսային օրվա տևողությունը աշնան-ձմեռային կարճ օրերին արհեստական լուսավորության (էլեկտրական լույսի) միջոցով երկարացվում և հասցվում է

մինչև 14—15 ժամի, նկատելիորեն բարձրանում է նրանց թե՛ աշնան-ձմեռային և թե՛ տարեկան մթերատվությունը։ Մեր լաբորատորիայում, ինչպես նաև արտադրության պայմաններում կատարած երկարամյա փորձերը հաստատել են, որ լրացուցիչ լուսավորության օգտագործման շնորհիվ, կերակրման և պահվածքի հավասար պայմաններում, հավերի տարեկան ձվատվությունն ավելանում է 20—25%-ով։ Ներկայումս ֆիզիոլոգիական այդ խթանիչը մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում բավականաչափ լայն տարածում է ստացել, բայց դեռ փոքր չէ նաև այնպիսի կոլտնտեսությունների թիվը, որոնք լրիվ չեն օգտագործում զոոտեխնիկական միջոցառումների կոմպլեքսի մեջ մտնող այդ կարևոր օղակը՝ տնային թռչունների մթերատվությունը բարձրացնելու համար։ Ժամանակն է, որպեսզի մեր ռեսպուբլիկայում չլինի ոչ մի թռչնաբուծական տնտեսություն, որը չօգտագործի թռչնաբուծության մթերատվության բարձրացման այդ էժան, մատչելի և էֆեկտավոր միջոցառումը։

### գ. Հետերոզիսի («հիբրիդային ուժի») օգտագործումը գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվությունը բարձրացնելու նպատակով

Զարգացնելով Դարվինի ընդհանրացումները տրամախաչման օգտակարության, և տեսական նեղ-ազգակցական բուծման վնասակարության մասին, միչուրինյան գիտությունը մշակեց օրգանիզմի կենսականության մասին մի ամբողջական ուսմունք, որը լայն ասպարեզ բացեց հայտնաբերած օրինաչափությունների և մասնավորապես հետերոզիսի պրակտիկ օգտագործման համար։

Անասնաբուծության մեջ օգտագործվում են տրամախաչումների տարբեր եղանակներ նայած թե ինչպիսի՛ նպատակ է հետապնդվում։ Վերջին տարիները լայն տարածում է ստացել (մասնավորապես խոզաբուծության և թռչնաբուծության մեջ) արդյունաբերական տրամախաչման եղանակը, որը կիրառվում է ապրանքային ֆերմաներում։

Այդ եղանակի էությունն այն է, որ տարբեր ցեղերի կենդանիները կամ թռչունները տրամախաչվում են միմյանց հետ, սահմանափակվելով միայն առաջին սերնդի ($F_1$) խառնածիններ ստանալով։ Այդպիսի խառնածինների մոտ շատ ուժեղ կերպով է դրսևորվում հետերոզիսի երևույթը — «հիբրիդային ուժը»։ Նրանք օժտված են լինում բարձր կենսունակությամբ, արագ և փարթամ են աճում, ունենում են ավելի բարձր մթերատվություն և լավ են հատուցում կերերը։ Տրամախաչման այդ եղանակը առավել լայն տարածում է ստացել թռչնաբուծության մեջ։ Սովորաբար տրամախաչվում են մսա-ձվատու ցեղերի թռչունները ձվատու ցեղերի հետ։ Փորձերը ցույց են տվել, որ բացի տրամախաչվող ցեղերի ճիշտ ընտրությունից (զուգորդումից), բարձր արդյունք ստանալու համար կարևոր նշանակություն ունի նաև սեռերի ընտրությունը։ Սովորաբար մսա-ձվատու, ծանր քաշ ունեցող ցեղերից ընտրվում է աքաղաղը, իսկ ձվատու, թեթև քաշ ունեցող ցեղերից՝ հավը։ Բայց առանձին փորձեր ցույց են տալիս, որ որոշ ցեղային զուգորդումների ժամանակ ավելի բարձր էֆեկտ է ստացվում, երբ աքաղաղն է ընտրվում ձվատու ցեղից։ Հայաստանում մեր կողմից թռչունների արդյունաբերական տրամախաչման փորձեր դրվեցին դեռ 1953 թվականից սկսած։ Վերջին 3 տարում այդ փորձերի արդյունքները ներդրվեցին արտադրության մեջ՝ Էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկայում։ Տրա-

*մախաչվում են Երևանյան նոր ցեղային խմբի աքաղաղները (մսա-ձվատու ուղղության) ռուսական սպիտակ ցեղի (ձվատու ուղղության) հավերի հետ։ Այդպիսի տրամախաչումից ստացված առաջին սերնդի խառնածինների տարեկան միջին ձվատվությունը 1957—1958 թթ. կազմեց 180,1 ձու, գերազանցելով ստուգիչ հոտում սպիտակ ռուսական ցեղի հավերի ձվատվությանը (164,8 ձու) 15%-ով։ Կենդանի քաշով խառնածինները գերազանցեցին սպիտակ ռուսական ցեղի հավերին 18%-ով։ Այդպիսի տրամախաչումից ստացված խառնածինները աչքի են ընկնում նաև իրենց բարձր կենսունակությամբ և ավելի լավ են հատուցում կերերը։ Անասնաբուծության և թռչնաբուծության մթերատվության բարձրացման այս էֆեկտավոր միջոցառումը ևս պետք է լայնորեն կիրառել մեր ռեսպուբլիկայի ապրանքային ֆերմաներում։*

### Դ. Ճարպի տոկոսի բարձրացումը կաթի մեջ անասնաբուծության ամենաակտուալ պրոբլեմներից մեկն է և նրա մթերատվության բարձրացման լուրջ ռեզերվը

*Այդ պրոբլեմի լուծումը մինչև օրս էլ ընթանում է հիմնականում երկու ուղիով։ Առաջին ուղին նպատակ ունի ստեղծել տավարի այնպիսի ցեղեր, որոնց կաթը ունենա բարձր ճարպապարունակություն (5—6%) և այդ հատկությունը լինի ժառանգական, կայուն կերպով հաջորդվի սերունդներին։ Երկրորդ ուղու նպատակն է ճարպի տոկոսը կաթի մեջ բարձրացնել ճիշտ կերակրման, զոոհիգիենական և այլ միջոցառումների միջոցով։ Այդ երկու ուղիներն էլ ուշադրության արժանի են և ունեն մեծ հեռանկարներ։ Ճիշտ է, առաջին ուղին պահանջում է ավելի երկար ժամանակ, բայց նրա նշանակությունը դժվար է գերագնահատել։ Վերջին 5—6 տարում այդ ուղղությամբ շատ հետաքրքրական և խոստումնալից աշխատանքներ են կատարվում ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Գենետիկայի ինստիտուտի «Գորկի Լենինսկիե» էքսպերիմենտալ տնտեսությունում, ակադ. Տ. Դ. Լիսենկոյի ղեկավարությամբ։*

*Կիրառելով բարձր ճարպայնությամբ կաթ տվող ջերզեյական ցեղի արտադրողների ու ցածր ճարպայնությամբ, բայց մեծ քանակի կաթ տվող տարբեր ցեղերի կովերի տրամախաչման և նպատակաուղղված դաստիարակման հատուկ մեթոդներ, այդ տնտեսությունում արդեն ստեղծվել է կենդանիների մի ամբողջ հոտ, որոնց կաթը պարունակում է միջինը 5,15% ճարպ, այն ժամանակ, երբ ջերզեյական արտադրողների հետ տրամախաչվող կովերի կաթի մեջ ճարպի պարունակությունը կազմում է մոտ 3.5%։ Առավել հետաքրքրական է այն փաստը, որ բարձր ճարպապարունակություն (5% և ավելի) ունի ոչ միայն կիսարյուն (առաջին սերնդի) խառնածինների կաթը, այլ $^1/_4$ արյուն (ջերզեյական ցեղի գծով) ունեցող խառնածիններինը։*

*ՍՍՌՄ տարբեր մարզերի մի շարք սովխոզներում նույնպես սովորական եղանակով տրամախաչվել են ջերզեյական ցեղի արտադրողները կաթի մեջ ճարպի ցածր տոկոս ունեցող ցեղերի հետ։ Բայց բոլոր այդ տնտեսություններում էլ առաջին սերնդի խառնածինների կաթի ճարպապարունակությունը 4,3—4,4%-ից չի անցել։*

*«Գորկի Լենինսկիե» էքսպերիմենտալ տնտեսություններում ձեռք բերված նվաճումն ունի ոչ միայն կարևոր պրակտիկ նշանակություն, առավել մեծ է նրա նշանակությունը բիոլոգիական գիտության և, մասնավորապես, բիոլոգիական տեսակի կյանքի օրենքի տեսության հետագա զարգացման տեսակետից։*

*Պատահական չէ, որ «Պրավդա» թերթը ագրոբիոլոգիական գիտության նվաճումներին և «Ռոմանիկական ժուռնալի» կեղծ գիրքավորումներին նվիրված իր 1958 թվականի դեկտեմբերի 14-ի խմբագրական հոդվածում անդրադառնալով կաթի մեջ ճարպի պարունակության ավելացման ուղղությամբ ակադ. Տ. Դ. Լիսենկոյի ղեկավարությամբ տարվող աշխատանքներին, նշում է, որ* այնպիսի արդյունքներ, ինչպիսիք ստացվել են «Գորկի լենինսկիե» ֆերմայում, աշխարհում դեռ ոչ ոք չի ստացել» *(ընդգծումը մերն է Ս. Կ.)։*

*Հայկական ՍՍՌ ԳԱ Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գյուղատնտեսական կենդանիների ֆիզիոլոգիայի լաբորատորիայում մեր և մեր աշխատակիցների կողմից հետազոտություններ են տարվում Հայաստանում բուծվող տավարի կաթի ճարպայնության բարձրացման և ճարպագոյացման ֆիզիոլոգիական մեխանիզմների ուսումնասիրության ուղղությամբ։ Ստացված նախնական տվյալները բավականին խոստումնալից են։*

## Է. Կաթի ճարպապարունակությունը բարձրացնելու մի նոր եղանակի մասին

*Վերջին երկու տարվա ընթացքում, երկրի տարբեր շրջաններում, լայն արտադրական ստուգում է անցնում կաթնաճարպի ավելացման այդ նոր եղանակը։ Ներկայումս ապացուցված է համարվում, որ երբ կովերին հիմնական կերաբաժնից դուրս երեք օրվա ընթացքում տրվում է օրական 3,3 լիտր թարմ գարեջրի դրոժներ հեղուկ վիճակում (ընդամենը 3 օրում 10 լիտր), ապա նրանց կաթի մեջ ճարպի քանակը բարձրանում է 0,43%-ից մինչև 0,71% (միջինը 0,4[illegible])։ Ճարպի այդպիսի բարձր տոկոսը կաթի մեջ պահպանվում է մինչև 1,5 ամիս, իսկ երբեմն էլ ավելի երկար։ Դրոժներով կերակրելը նորից են վերսկսում, երբ ճարպի տոկոսը կաթի մեջ սկսում է պակասել։*

*Դրոժների ներգործության ֆիզիոլոգիական մեխանիզմը հետևյալն է։ Ինչպես ներկայումս ապացուցված է, ճարպաթթուների անմիջական նախորդը, ճարպագոյացման ժամանակ, հանդիսանում է քացախաթթուն։ Բայց կաթնաճարպը բաղկացած է ոչ միայն ճարպաթթուներից, այլ նաև գլիցերինից. ուստի ճարպագոյացումը խթանելու համար պետք է նպաստել, որպեսզի կենդանու օրգանիզմում ավելի մեծ քանակով գոյանան ոչ միայն ճարպաթթուներ, այլ նաև գլիցերին։ Գարեջրային դրոժները հենց այդ դերն էլ կատարում են, երբ թափանցում են կենդանու նախաստամոքս և այնտեղ ուժեղացնում սպիրտային խմորումները։ Սպիրտային խմորումների հետևանքով առաջանում է էթիլային սպիրտ, որը ներծծվելով արյան մեջ, օրգանիզմի հյուսվածքներում վեր է ածվում քացախաթթվի։ Սպիրտային խմորումները միաժամանակ առաջացնում են միջանկյալ պրոդուկտներ (տրիոզաֆոսֆորային թթուներ), որոնք գլիցերինի գոյացման աղբյուր են հանդիսանում։ Այսպիսով, դրոժների ներգործության շնորհիվ օրգանիզմում համեմատաբար ավելի շատ քանակով են առաջանում ճարպի սինթեզի համար անհրաժեշտ երկու ելակետային նյութերն էլ, որոնք և խթանում են ճարպի տոկոսի ավելացումը կաթի մեջ։*

*Մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները և սովխոզները պետք է լայնորեն օգտագործեն կաթի մեջ ճարպի տոկոսի բարձրացման այս էֆեկտավոր միջոցառումը։*

## 8. ԼԱՅՆՈՐԵՆ ՏԱՐԱԾԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Երկրի առաջավոր անասնապահները վերջին շրջանում անասունների պահվածքի չափազանց էֆեկտավոր եղանակներ են կիրառում։ Այդ հարցերին մեծ ուշադրություն նվիրեց ՍՄԿԿ Դեկտեմբերյան պլենումը (1959)։ Բարձր արդյունք է տալիս, օրինակ, տավարի արձակ պահվածքը։ Այդ եղանակի օգտագործման դեպքում 25—30%-ով ավելանում է կովերի կաթնատվությունը, զգալիորեն կրճատվում է բանվորական ուժը, իջնում է մթերքների ինքնարժեքը, իսկ մատղաշները ավելի լավ են աճում (դա հաստատված է նաև մեր ռեսպուբլիկայում (Վեդու շրջան) Ա. Դ. Երիցյանի կողմից տրված փորձերով)։

Առանձնապես մեծ խրախուսանքի, Դեկտեմբերյան պլենումում, արժանացավ տաղանդավոր նորարար Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Յարոսլավ Չիժի արտադրական փորձը։ Կիրառելով խոզերին մեծ խմբերով, առանց վանդակների պահելու եղանակը նրան հաջողվեց նույն շենքում հինգ անգամ ավելի խոզ պահել, 20 անգամ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և մի քանի անգամ կրճատել մսի ինքնարժեքը։ Խոզերի կերակրման պարզ մեթոդներ օգտագործելու շնորհիվ Յա. Չիժը հասավ այն բանին, որ 1 կգ քաշաճի վրա 6,6 կերի միավորի փոխարեն ծախսվում է 4,3 կերի միավոր։ Մեծ արդյունք է տալիս ոչխարների խտացրած ծնի և վաղ (ձմեռային) ծնի կազմակերպումը։ Այդ ուղղությամբ դրական արդյունք կա նաև մեր ռեսպուբլիկայում։

Մենք կանգ առանք անասնաբուծության մթերատվության բարձրացման միայն մի քանի կարևոր ռեզերվների վրա։ Համոզված ենք, որ դրանց ճիշտ օգտագործումը կնպաստի մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում անասնապահության հետագա զարգացման և անասնաբուծական մթերքների արտադրության հետագա ավելացման գործին։

Հայկական ՍՍՌ ԳԱ Լ. Ա. Օրբելու անվան
Ֆիզիոլոգիայի ինստիտուտ